

Հ. ԲՈՒՍԱԲԱՌՈՒԹԻՒՆ

(Տես յ' էջ 322)

115. * Անհարա կամ Անհորա.

Լաւ եւս Անձիրէ. — Եղծի հունդն է. Պ. Անձորէ ځڼ : Տես Եղիմ.

116. Անհարակ.

« Որ է Մարգանկոյն », ըստ բժշկարանի, որ և պէսպէս այլայլութեամբ գրուի, Մարգանձօղ, Մարձանկօղ, Մարգանկոռ, Մարտակոռ, Մարտաղոռ, և այլն. ամէնն ալ են Պ. Մերգեկնիոռ, مرزنگوش, որ նշանակէ Մկան ականջ, ինչպէս և « Արապն Ազան ըլ-ֆար կու ասէ », բայց զանազանէ ալ և ալ տեսակ. յորոց յիշելով մեր բժշկապետն ալ, մէկն Ազան ըլ-ֆար Պօտոսնի՝ կու գրէ, զոր « Թուրքն » Սըլան դուրդի ասէ, որ է Մկան ականջն, որ է Անագալիս (Anagallis), որ է Սա. » մոշխն որ է Սամսիմոնն » (Σάμψιμον), և այլն, զեռ ուրիշ վեց եօթն անուններ ալ աւելցնելով կ'ըսէ, « Այս ամենայն անուանքն Մարճանկօղին անուանքն է... » և ոմանք այլ ասեն թէ Մարգանկօղ չէ՝ Խուզամի է », (Lavanda Spica, փ. Lavande mûle. Ի. Лавенда). Այս խօսքերս յայտնեն, որ հարկ է բուսոց զանազան տեսակներ ըլլալ, թէ և նոյն ցեղէ. և այսպէս բուսարանք Մարգանկօղ կամ մեր Անհարակը՝ կու ճանչնան ի Majorana, փ. Marjolaine. Անագալիսը՝ փ. Mouron, չ. Տգրկախոտ, Մկնականջն ալ՝ նոյն իմաստով և հոռմի բառով Միոսոտիս, Myosotis, մենք ալ նոյնպէս նշանակեմք ի կարգի Մ, և Տ տառից, այն տեղ նշանակելով Ամիրտոլվաթայ ըսածները, իսկ այս տեղ յատուկ առաջինին համարը. « Մարգանձօղ. ինքն խոտ է, և մանր տերեւ ունի, սպիտակ գոյն » է. աղէկն վայրին է. Ասէ Յեսու բժիշկն (1), թէ քանայ գեր(ա)կնուն կա. » լուածն և զըղեղն », և այլն. — Պէյթար յիշէ որ այս խոտիս լաւն կ'ըլլայ ի Կիպրոս և ի Կիւզիկոն, և թէ Կիւզիկեցիք Ամարակոն կու կոչեն, անոր համար ոմանք ի գիտնոց ալ այս ցեղիս նման բոյսերը զանազանելով՝ կոչեն զսա (Անհարակը) Majorana Amaraeus.

117. Անհիտա. Անհիտան.

Մէկ գրի (2) յաւելմամբ Ամիրտ. կու զանազանէ երկու բոյս. առաջնոյն համար գրէ. « Խոտ է, և իր տակին խէժն է Օշախն (Օշակ. Ammonias). աղէկն » Հնտին է... Ասէ Ֆուլուսն (Fulvius), թէ ինքն զԹանձք կերակուրն լաթիֆ

1. Այն է Յախէ, բարեկան կամ բժիշկն Գրիգորի Մազխաթուրի:

» (բարակ, թեթեւ) առնէ. և սաէ Մասրճուանն (1), թէ սպիտակն և անուշա-
 » հոտ՝ զկերակուրն աղէկ ուտեցընել տայ »: Այս խէժս հին ատեն կու գար
 Եգիպտոսէ և Ափրիկիոյ Ամմոնիայ գաւառէն՝ որ յետոյ Կիւրենական կոչեցաւ,
 անոր համար Եւրոպացիք Ամմոնիակ կոչեցին, և ի Միջին դարս՝ խանգարմամբ
 Armoniacum. Հասարակօրէն Նարդէսէ կու հանուէր. իսկ հիմայ ուրիշ բոյսէ կու
 զտուի (Dorenia Ammoniacum). — Բայց դարձեալ գրէ Ամիրտ. « Անճիտա, որ
 է Հայիլ բլ-բարպն (Շանխոտ) և Հայն Հօտիտոյ սաէ », որով շփոթէ կամ զուգէ
 միւս տեսակին հետ որ է,

118. Անճիտան.

Այս անուամբ ալ գարձեալ երկու տարբեր ցեղի բոյս կարծեցընեն մեր բժշկա-
 բանը, մէկն Թուրքարէն խօրօց կեօզիւ (Աքլորի աչք) անուանելով. իսկ միւսը և
 գլխաւորն՝ շատ նշանաւոր, իր խէժին համար, որ մեր լեզուաւ այլեւայլ անուանե-
 ունի, Անգոստատ, Մադր, Կապնեղ, Ուպան, Փադրան (Galbanum), Չարնոտ, Բարկ
 ժառ կամ Բարգաստ, Հիքիս, և օտարներէ ալ առած և յիշուած թ. Ղամիշ,
 Մախրոս, և այլն, զորս յիշեց իրենց կարգին, եթէ կարենանք ալ տարբերու-
 թիւն մի գտնել նիւթոց մէջ: Մեզի աւելի կարեւորն էր այս Անճիտանի ընդհա-
 նուր անուան իսկը ճանչնալ (2), կամ անոր համանիշ ըսուածներուն նոյնութիւնը
 կամ տարբերութիւնը. վասն զի ի բժշկարանս մեր՝ խէժին նման խժաբերն ալ
 այլեւայլ անուամբք իրեւ նոյն նշանակուի և շփոթի. այսինքն են, բնիկ և եկա-
 մուս, Մեդրատոս, Հօտիտոյ, Հիքիս, Շանշանիք, Շանխոտ, Խորտակ ժորրիւ, Պա-
 րասիոն, Սասալիոն. ասոնք ալ նշանակենք իրենց անուան կարգին. բայց յիշեմք
 այս որ Եւրոպացիք ալ տարակուսին և չեն միաբանիր Յունաց և Արաբաց գրած
 անունները զուգելու կամ զանազանելու (3). զոր եթէ մենք ալ չեմք կրնար
 բոլորովին պարզել, զոնէ հաւանօրէն՝ անոնց նմանելով և քիչ մի գտաելով՝ այս-
 պէս զուգեմք. Ա. վերդիլեալ Ուպին, Ammoniac. Բ. Անճիտան—Silphium. Գ. Ան-
 ճիտան Ռումի (Հոսոմոց), Seseli. Դ. Անճիտանի տակ=Մախրոս, Ե. Մեդ-
 րածուս=Պարասիոն=Marrubium. զայս տես ի կարգի Մ տառի:

Ամիրտուլվաթ ընդհանուր անուամբ զԱնճիտան զուգէ Սեւելեայ, Բ. Σέσέλι,
 և Սայսալիոս կոչէ ըստ Արաբաց, որոյ « Թուրքն Ղամնոս ծառ կ'ասէ. և ինքն եր-
 » կու ցեղ է. և Պ. Անկիտան ասեն, և ինքն Հիքիսին՝ ծառն է, և Մախրոսն
 » է, և Հլթիան իր խէժն է, և իր տերեւն սպիտակ և սեւ է, և լաւն այն է որ
 » սպիտակ լինի և անուշահոտ. և այն որ տերեւն սեւ է. Ճթինն է, և ինքն
 » Անճիտանին սասիւն (խէժ) է. և այն Անճիտանն Ճթին կու լինի. և այն որ
 » Անճիտայի տայիպն է՝ անոր Հիքիսի տայիպ կ'ասեն, և Անճիտանի Քայիմ կ'ա-
 » սեն. և այն որ Անճիտանի Խորասանի է՝ Ուշրոյիսար կ'ասեն անոր տակին. և

1. Հրեայ բժիշկ, Ը դարուն սկզբները, Masserdjouih.

2. Ինճիսի, պարսկերէն Պրաս բանջարը նշանակէ:

3. Շատ ըլլայ այս տեղ Պէլթարի Թարգմանչին (Leclero) այս խնդրոյս վրայօք ըսածին սկիզբը
 և վերջը. « L'histoire du Silphium (Անճիտան) est une des plus épineuses et des plus
 controversées de la matière médicale... En somme, l'histoire des Silphium et de
 l'Andjoudan présente encore des lacunes à remplir,

» այն որ Անձիտանի Ռոշմին է՝ Սայսալիոս կ'ասեն. և հունդն՝ Քաղիմն է. իսկ
 և (Պէյթար) ասէ, թէ Անձիտանն Ուշթուրխարն է, և կարմիր պտուղն է. և
 » Ղանին իր խէժն է. և ինքն սեւ այլ կու լինի և սպիտակ այլ կու լինի », և այլն։
 Այս Սէսէլի Անձիտանի Libanotis կոչուած տեսակը տեսած են տեղաբնիկ
 ի կիւմկիւմ, Մշոյ կողմերը։

» Քաղիմի Ռոշմի, որ է Անձիտանի Ըռոշմ. ինքն ի բարձր լեռունքն կու բուսնի
 » և ի ծառերուն ի մէջն, և Սամթի պէս է և Աքլիլմէլիքի պէս կակուղ, և հոտն
 » աղէկ կու լինի, և հունտն ի Ըռգիան կու նմանի... Հոնտն և տակն տաքցը
 » նոզ է, և զգերակուն մարտէ... Եւ ոմանք ասեն թէ ինքս ի Սայսալիոսին ցեւ
 » դերուն է... Սէ Պտ. (Պատէհին) թէ ինքն Անձիտանի ըռուսին է, և Հոռոմն
 » վաղդիտիդննէ ? (Tordylium) կ'ասէ. լաւն այն է որ զեղին լինի և մեծ, և տեւ
 » բուն այլ ի Անձիտան նման է, և ուժն ի Քամոնի կու նմանի... Թիատուղ
 » (Tiadocus) բժիշկն ասէ, թէ Քաղիմ՝ ածուցն է », այսինքն յ'ածուս, արտերու
 մէջ կու գտուի։ — Այս Քաղիմի Ռոշմի ըսուած Անձիտանը Եւրոպացիք Ligusticum,
 Թ. Ligustique կոչեն, ըստ Դիակորիտոսի, ի Լիգուրիա (Ճենովայի կողմերը) շատ
 գտուելուն համար, և Հովանեկածեւ բուսոց ցեղէն է, ինչպէս Սեսելին ալ, Այս
 յոյն անունով ալ առանձինն գրէ Ամիրտ. « Սասալիոս. ինքն Օլախին ծառն է, և
 » պտուղն է Սասալիոսն. աղէկն ի Հնդկաց զայ »։

Իսկ Անձիտանի տակ կ'անուանէ զՄախրուս, (Մահրութ, ماخر) ըստ Պէյթաւ
 րայ, « և լաւն այն է, կ'ըսէ, որ սպիտակ լինի և թեթեւ լինի »։ Ուրիշ տեղ
 նոյնպէս Անձիտանի տակ կոչէ վերոյիշեալ Ռաշթարխար պարսիկ բառը, որ է
 Ըղտափուշ, և յիշուի ի կարգին։

119. * Անճիխտամ.

« Ինքն Թուզ կու նմանի, բոլոր և կարմիր. և ինքն Հանդալն է (տես զայս) և ի
 » մէջն որպէս կէտեր ունի, և ինքն ծառի մի միրգն է. ի Հնդկաց կու զայ »։ — Ամիրտ.

* Անճորա. — Տես Անճարա.

120. Անճորան.

Ոսպան տերեւ է, կ'ըսէ բժշկարան մի։

121. * Անճուռն.

Ըստ Ամիրտ. է Թուտ (տես զայս), Հալուէի տեսակ մի. իսկ Պէյթար յիշէ Ան-
 ճուռք և ըստ ոմանց Անճարակն է, կ'ըսէ։

122. * Անճուպար.

« Ինքն խոտ մ'է, որ ի գետեզերքն կու լինի և ի Մրտենուն տակերն կու բուսնի,
 » և տերեւն նման է Աւովուտին տերեւին, և ճղերն այլ ի Աւովուտին ճղերն կու
 » նմանի, և այլ հաստեկ, և գոյնն կարմիր, և ծաղիկն այլ կարմրածեւ է... Ամիրտ.

ն որ շարապն... զհին թորացաւութիւնն շատ ուժովցընէ և օգտէ. և ասեր են,
 » Թէ Մեք երեքամուն թորացաւութեմն՝ այսով դեղ արաք, շատ օգտութիւն
 » գտաք... Ասէ Պատէհին, Թէ ինքն հընդին Շատախ կ'ասուի, և Շաշախ այլ
 » կու ասեն. և ինճուպարն ի պատուական դեղերուն է, և ի տակն և ի քա-
 » մուքան՝ որպէս Թըթի իւրն է, խիստ կարմիր. և այն որ սպիտակ է՝ չէ աղէկ »
 Թարգմանին Պէյթարայ՝ անծանօթ բոյս մի գտնէ զայս, Թէ և ուրիշ արաբացի
 հեղինակ մի ըսած ըլլայ՝ Թէ Ճանկիկն է, Chevreuille.

133. Անմուռկ.

Դանօթ բանջար ուտելի, որոյ տւելի ընտիր անունն է Փրփրեմ, և այն տեղ
 յիշենք ինչ որ Ամիրտ. կ'աւանդէ արաբացի անունն տակ. Լ. Portulaca. Փ.
 Pourpier. Վաստակոյ գիլքն առաին անուամբն յիշէ իրբու դեղ, Բժկարան մի՝
 « Անմուռկ՝ Փրփրեմին հունտն է, կ'ըսէ, և այլ ասեն Ղըրքայ », (նոյն Փրփրեմն),
 ոմանք ալ վայրի Փրփրեմն է կ'ըսեն:

134. Անտախ.

Աիմ. Կամարկապցի կոչէ, Թ. Տեվէ տիքէնի, որ է Ահքան փշեղէնն (տ. Թիւ 46):

135.* Անտուզ.

Թ. Ինտուզ. հայերէն Կղմոխ. տես զայս:

136. Աշարայ.

Այսպէս կ'անուանեն զաւառականք նորարոյս խոտերը:

137.* Աշխէն.

Թ. Աշղըն. Փլոտ խոտ մի է այս. անունս լսուի 'ի կողմանս Սեբաստիոյ:

138. Ամուհիսայ.

Վայրի Ստեպղին, ըստ Սեբաստացւոց:

139. Ամուշայ.

Հալուորիկն է, կամ տեսակ մի Մուշի. տես զասոնք:

140. Անապ.

Ստեփ. Ռաշքեան գրէ ի Բաւարանին. « Թուի է, որ ի սկիզբն ձմեռան պըտ-
 դաբերէ ». և վկայութիւն բերէ, « ԶԱնապի պտուղն քաղեաց և արար », և այլն:

131. Աշնապաշար.

Յատուկ բոյս մի որ յաշնան կու ծաղկի, և անանոց կեր կ'ըլլայ:

132. Աշորայ.

Երկու բոյս նշանակուի այս անուամբ. մէկն է ծանօթ Հաճարն, զոր տես. միւսն՝ ըստ ոմանց Լուրիա կամ անոր մէկ տեսակն. Բժշկարան մ'ալ մէկտեղ յիշելով կ'ըսէ. « զԱշորայն և զՈխեռն և զԲակլայն՝ մեղրով եփէ ո, և այլն: Ուրիշ տեղ ալ նոյնպէս զոչ յիշուի « Աշորայ, Կորեակ, Ոսպն »: Յայտնի է որ Հաճարէն հաց ալ չինեն՝ որ այս բառով կ'անուանի Աշորեայ հաց:

133. Աշորախոտ.

Զայս ալ Ռոշքեանն յիշէ, իբրև արտերու մէջ բուսած Աշորայի և Յորենի միջոց, ի բժշկարանէ վկայութիւն բերելով, և Լ. կ'անուանէ Consiligo. բայց այս Լ. անուամբ բուսաբանք կ'իմանան Էլեբորոս (Hellébore) և կամ անոր ազգակից բոյս մի, Veratrum, զոր նոյն Ռոշքեան Զոք կոչէ:

134. Աշորուկ.

Թերեւս վերինն ըլլայ կամ Աշորայն. վասն զի նոր ծանօթարարն կ'ըսէ, Հաճարի նման երկայն խոտ է, ծաղիկ կու բերէ այլ ոչ պտուղ կամ հատ:

135. Աշտիպ.

Բժկարան մի այսօր դիմաց դրէ Աշոր, և կ'ըսէ, « Ինքտ հետ մարտին ելանէ » — Ador, ցորեն նշանակէ առ Հռոմայեցիս. Գալիենոսի բառից մէջ ալ համանիշ գրուած է Զաւար: Ասկից ալ յինուի Աշտպեայ հաց, ինչպէս գրուած է:

136. Աշխընթին.

Քննելու և գիտնալու արժանի բոյս մի, որովհետեւ յիշէ հին բժշկարանն, այս բանն. « Վայրի Խաչիչի ունտ Գ. գրամ, Աշխընթին գրամ Ա. աղա, մաղէ »:

137-8. Աշծաղիկ.

Զայս յիշեն տեղացիք և ծանօթք ի Խոտուլուր, Համէն, Արտահան և ասոնց մօտերը. և ոմն կ'անուանէ Թ. Կիւլիւիւիւ. և համարուի վայրի վարդ մի, ինչպէս Rosa Egiptea կամ Latea. Թերեւս նոյն է ոմանց Ալքախոտ ըսածն ալ:

139. Աջքափուճ.

Թ. Կեօ ցօրի, իբր դեղ աչաց. Թէ և ինքն Թունաւոր կաթ ունի, կ'ըսուի: Լ.

Euphrasia. **Փ.** Euphrasie. Հասարակ տեսակն այլեւայլ զանազանութիւն ունի, մէկն Tatarica կոչուի, յոմանց ալ Հայկական, Euph. Armena, 'ի փոքր Հայս նշանակուած, ուր գտուին և Սալիսբուրգեան կոչուածն ալ, Euph. Salisburgensis.

Ապանոս. — Տես Ոսկեհատ:

140. Ապիկու խոտ.

Ըստ Ա.Ր. Հայիշերի **ի** գ-գիւննաւ. **حشيشة الرجاء**, Ամիրտ. կ'ըսէ « Հայիշ » ըլ-գոյնաւ, որ Հայք Ապիկու խոտ կ'անեն, և Հոռոմն Ռիսիմոն (Ρύσιμον, Փեգեմա), « և ինքն խոտ-մն է որ աղբերներուն մէջ (կամ խէշն) կու բուսնի և ի յրեգերը. » և իր տերեւովն ապիկի կու լվանան »: Պէյթար փոխանակ յունարէն Ռիսիմոնի՝ կ'ըսէ Էլիսիմի. որ է Helixine, յոյն Έλκω բառէն, որ քաշուբորի ըսել է, այն խոտին գետնի վրայ ճապղելուն համար. այս պատճառաւ ոմանք ի մեր նորոց՝ կոռնիւն կոչեցին. Դիոսկորիտէս գրէ՝ թէ պատերու վրայ ալ բուսնի, առոր համար Ստ. Ռոշեան ալ Սոխտրմ թարգմաներ է. լատին անունն ալ որմ (պատ) նշանակէ. Parietaria. **Փ.** Pariétaire. Եղիճներու ցեղէ է: Տես և Փիթրախ:

141. Ապկաւ.

Սերաստիոյ կողմանց բառահաւաքն յիշէ և զուգէ Ա.Ր. Լուսպպ ըլ-շահմ, **թ.** Նիշատաւ անուանց:

142. * Ապուզան.

Ամիրտ. Անշարա անուամբ կու ստորագրէ, զոր լաւ եւս գրէ Պէյթար՝ Օնոթրա **اوجان** ի յոյն անունէ, որ իշու որս կամ կեր նշանակէ. նոյնպէս անուանի և **Լ.** Oenothera. **Փ.** Onagre. « ինքն խոտ-մն է՝ որ փայտ (ժառ) կու նմանի. և տեղ- » բեւն նի տերեւի կու նմանի. և ի մէջն տերեւ կայ որ ի Սուսան կու նման- » նի, և ծաղիկն նման է նաւն ծաղիկն. ի բերունքն կու բուսնի. և բնութիւնն » հով է. և տակն փոքր կու բուսնի, և սպիտակ է. և թէ առնուս զայս խոտս և » շորացընես՝ հոտն ի գինու հոտ կու նմանի. և թէ զայս խոտս ջրով եփեն և » զլոբն խմցընեն այն գազանոցն և անասնոցն՝ որ ի մարդ չէ սովորել, սովորի » (ընտանեանայ). և թէ սպեղանի առնես և օծես ի վերայ պեղծ խոցերուն, » օգտէ և աղէկ միս բուսցընէ: Սէ Պա. թէ այս խոտիս պարսկերէն Անուար » կ'անեն և Ապուզան ալ կ'անեն »: Իսկ բուսարանք հիմայ անուանեն Epilobium angustifolium (նեղտերեւի) կամ hirsutum. Աս անուամբ նշանակեն գիտ- » նական ճամբորդք՝ որ տեսեր են ի կողմանս Հայոց, յԱրգուին, Համէն, խո- » տուլուր, և այլն:

143. * Ապրանն.

Պարսկերէն անուն է, **عجوة**, զոր Պէյթար Պորիմմ կամ Պորեմք գրէ. Ա.

մերտ. Կ'ըսէ՝ « Ինքն շնորհ եղեցին հունտն է. աղէկն ի շնորհաց զայ. . . Ասէ »
 « Սահակ բժիշկն (1)՝ Թէ օգտէ ամենայն թանձր պաղլամին »: Դարձեալ գրէ, Թէ
 « Սեւուկ հունդ-մն է, և բողկի հունդ կու նմանի. և մանր այլ կու լինի և խոյր
 » այլ կու լինի. լաւն այն է որ նոր լինի... Ասէ Պատէհին, Թէ Ապրանն և Պսու-
 » նայն կու ասեն. և պարսկերէն Պրինկ ֆապիլի կ'ասեն. և ինքն երկու ցեղ է,
 » մեծ և փոքր. լաւն այն է որ փոքր լինայ, և գունն կարմիր կու զարնէ... ըզ-
 » ճիճին սպունելու համար՝ իսկի զեղ այսոր նման չկայ... Եւ այլ ասացած է Թէ
 » Դանքին է ո, ֆինպիլ, جالند. այս անծանօթ բոյս մ'է Եւրոպացւոց, բայց
 կարծեն իրենց Mallotus philippensis կոչածը. իսկ մեր Ամիրա. Ղ. գրին շաւակին
 մէջ կ'ըսէ, ֆաքանաձն է, Alkekengi. վերոյգրեալ Պրինկն ալ հոմանիշ կամ հո-
 մացեղ է Փաքանաձն,

ՀԱՅՔ ԵՒ ԴԻՑԱՐԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Տես յէջ 287)

ՀԱՅԱՐԱՆՈՐ գաղթականութեանց կեդրոն եղող այս գօտին՝ կրկին
 աշխարհաց կը բաժնուի. « Մեծ » և « Փոքր Հայք ». որոց առանձինն բա-
 ժանմունքն, Նահանգներն և սոցա գաւառներն մի առ մի յիշելն աւելորդ
 կը համարիմք աստէն. մեծամեծ և հոյակապ գրիչներ այդ պէսքն լրացուցած
 ըլլալով արդէն իսկ 'ի վաղուց:

Այս կրկին աշխարհաց ժողովրդոց վարուց՝ բարուց սովորութեանց, արուես-
 տից, քաղաքականութեան աստիճանին, կրօնից և պաշտամանց, մտաւոր
 աշխուժի և գործունեայ կենաց միայ գաղափար ստանալու համար, եթէ
 բացարձակապէս զրական փաստաբանութիւնը պակասէին, և չլլայար մէկն որ
 խօսէր, և ո՛ր և է արտաքին օժանդակութիւն չկարենայինք գտնել, միթէ
 իբր բնական փաստ և հաստատուն նեցուկ չէի՞նք կարող յառաջ բերել այս
 կեդրոնէ ճառագայթող Գաղութներու՝ (Տիրսիներանց, Քաղզէացւոց, Իրա-
 նեանց, Հնդիկ-Արեաց, և այլն,) նկարագիրն, նոյնպէս սահմանակցաց և
 զրացի ազգացն:

Քննեմք մի առ մի. — Լիւդիոյ Տիրսիներանց Հայոց աշխարհէ պան-

1. Հրեաց բժիշկ մ'է, Ապու Եաքուպ պէն Սօլէյման էլ-Իլըպիլի մականուանեալ, Թ. դարու
 կիսուն ծնած և դար մի ապրած է. շատ բան գրած է, որոց ոմանց բնագիրն կ'իմայ չի գը-
 րուիր, այլ լատին թարգմանութիւնն: